Հաստատում եմ՝ 5 հունիսի 2026թ.

Հայ-Ռուսական համալսարանի

գիտական գծով պրոռեկտոր,

փիլիսոփայական գիտությունների դոկտոր,

ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,

պրոֆեսոր Ավետիսյան Պարգև Սերգեյի

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՄԱՐԻՆԵ ԱՂՎԱՆԻ

ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ (ԱՆԳԼԵՐԵՆ ՆՅՈՒԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Հայաստանի Հանրապետության բուհական կրթական համակարգում իրականացվող բարեփոխումների կարևոր ուղղություններից է օտար լեզուների ուսուցման գործընթացում ժամանակակից ռազմավարությունների, մեթոդների և տեխնոլոգիաների ներդրումը: Հատուկ նպատակների համար անգլերենի (ESP) դասավանդումը կարևոր դեր ունի սովորողների մասնագիտական լեզվահաղորդակցական կարողունակության ձևավորման

և զարգացման գործում: Քաղաքագիտական անգլերենը անհրաժեշտ է մասնագիտական հաղորդակցության, տեղեկատվության ընկալման, վերլուծության և փոխանցման արդյունավետ իրականացման համար: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է քաղաքագիտական անգլերեն լեզվահաղորդակցական կարողունակության զարգացմանը նպաստող արդյունավետ մեթոդական համակարգի մշակման անհրաժեշտությամբ: Հետազոտության շրջանակում բացահայտվել են քաղաքագիտական անգլերենի ուսուցման գործընթացում առկա հիմնական դժվարությունները և առաջարկվել դրանց հաղթահարման գիտագործնականորեն հիմնավորված լուծումներ: Մշակված և փորձարարորեն հիմնավորված մեթոդական համակարգը նպաստում է սովորողների մասնագիտական լեզվահաղորդակցական հմտությունների զարգացմանը և լեզվի արդյունավետ կիրառմանը:

Հետազոտության **նպատակն** է հիմնավորել, մշակել և ուսումնական գործընթացում կիրառել քաղաքագիտական անգլերենի ուսուցման մեթոդական համակարգ՝ սովորողների մասնագիտական լեզվահաղորդակցական կարողունակության արդյունավետ զարգացման նպատակով:

Հետազոտության **օբյեկտը** քաղաքագիտական անգլերենի ուսուցման գործընթացն է:

Հետազոտության **առարկան** քաղաքագիտական անգլերենի ուսուցման շրջանակում մասնագիտական լեզվահաղորդակցական կարողունակության ձևավորմանն ու զարգացմանն ուղղված մեթոդական համակարգը:

Հետազոտության **գիտական նորույթը** հայ կրթական իրականության մեջ առաջին անգամ քաղաքագիտական անգլերենի ուսուցման համար սովորողների մասնագիտական լեզվահաղորդակցական կարողունակության զարգացմանն ուղղված մեթոդական համակարգի մշակումն ու փորձարարական հիմնավորումն է: Մշակված համակարգը կարող է կիրառվել նաև այլ մասնագիտական լեզուների ուսուցման գործընթացում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Քաղաքագիտական անգլերենի ուսուցման արդիականությունը»**, անդրադառնում է մասնագիտական անգլերենի ուսուցման

տեսամեթոդական հիմքերին և դրա արդիական նշանակությանը: Այն ներկայացնում է մասնագիտական անգլերեն դասընթացի նպատակները, առանձնահատկությունները և ուսուցման հիմնական սկզբունքները: Շեշտադրվում է սովորողակենտրոն մոտեցման առաջնահերթությունը՝ ընդգծելով սովորողների լեզվական և թիրախային կարիքների համակողմանի վերլուծության անհրաժեշտությունը: Կարևորվում է նաև կոմպետենտային մոտեցումը, որի շրջանակում լեզուն դիտարկվում է որպես ոչ միայն հաղորդակցման, այլև մասնագիտական գործունեության իրականացման գործիք: Գլխում վերլուծվում են քաղաքական և քաղաքագիտական խոսույթները՝ որպես բովանդակային, կառուցվածքային և գործառութային բազմաշերտ համակարգեր: Տարանջատվում են դրանց հաղորդակցական նպատակները՝ քաղաքական խոսույթը դիտարկելով որպես հանրային կարծիքի ձևավորման միջոց, իսկ քաղաքագիտականը՝ որպես գիտական վերլուծության և մեկնաբանության դաշտ: Ընդգծվում է նաև լեզվական և հռետորական ռազմավարությունների կարևորությունը մասնագիտական խոսույթի արդյունավետության ապահովման գործում:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Քաղաքագիտական անգլերեն լեզվանյութի ընտրությունը և մեթոդական դասակարգումը»**, ուսումնասիրում է քաղաքագիտական տերմինաբանության ուսուցման տեսամեթոդական հիմքերը: Քաղաքագիտական տերմինների յուրացումը ներկայացվում է որպես բազմաշերտ գործընթաց, որը հիմնված է հաղորդակցական և գիտակցական-ճանաչողական մոտեցումների համադրության վրա: Վերլուծվում են տերմինների ընկալման հոգեբանական մեխանիզմները և հիմնավորվում է բառապաշարի փուլային ուսուցման անհրաժեշտությունը՝ ընկալման, վերլուծության և համադրման հաջորդականությամբ: Կարևորվում են բովանդակության և լեզվի ինտեգրված ուսուցման (CLIL) և առաջադրանքահեն ուսուցման (TBL) մոտեցումները՝ որպես արդյունավետ մեթոդական գործիքներ: Ներկայացվում են լեզվանյութի ընտրության սկզբունքները՝ շեշտադրելով բառապաշարային նվազագույնի ձևավորման գիտական չափանիշները և բնագիր տեքստերի դերը մասնագիտական բառապաշարի յուրացման գործում: Գլխում նաև հիմնավորվում է լեզվանյութի մեթոդական դասակարգումը և ուսուցման փուլային կազմակերպումը՝ հաշվի առնելով բառապաշարի յուրացման

դժվարությունները, միջլեզվային փոխներթափանցումները և համատեքստային կիրառությունը:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Քաղաքագիտական անգլերենի ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետության ստուգում և փորձարարական հիմնավորում»**, ներկայացնում է ՀՀ երեք բուհերում 2024–2025 ուսումնական տարում իրականացված փորձարարական հետազոտության արդյունքները: Հետազոտությանը մասնակցել են 164 ուսանող՝ տարբեր լեզվական մակարդակներով և տարբեր կուրսերից, իսկ գործընթացը իրականացվել է մեկ կիսամյակի ընթացքում՝ փուլային հաջորդականությամբ: Այն ներառել է հարցում, նախափորձարարական թեստավորում, փորձարարական ուսուցում և հետփորձարարական թեստավորում: Արդյունքները ցույց են տվել, որ սովորողները նախընտրում են փոխներգործուն և սովորողակենտրոն ուսուցում՝ համապատասխանեցված իրենց կարիքներին և լեզվական մակարդակին, ինչպես նաև կարևորում են տերմինաբանության և խոսույթի յուրացումը: Նախափորձարարական թեստավորումը բացահայտել է բառապաշարային, քերականական և իմաստային դժվարություններ, ինչպես նաև լեզվամտածողության առանձնահատկություններով պայմանավորված սխալներ: Ստացված տվյալների հիման վրա մշակվել և ներդրվել է մեթոդական համակարգ, որի արդյունավետությունը ստուգվել է փորձարարական ուսուցման ընթացքում՝ արձանագրելով դրական արդյունքներ:

Եզրակացությունը ամփոփում է հետազոտության արդյունքները և ներկայացնում ստացված հիմնական գիտական և գործնական եզրահանգումները:

Մարինե Փիլիպոսյանի ատենախոսությունը անկասկած ունի ոչ միայն տեսական արժեք, այլ նաև գործնական մեթոդական նշանակություն: Ընդհանուր բնութագրմամբ ատենախոսությունը արդիական և բովանդակալից աշխատանք է, որն առանձնանում է հետազոտողի նպատակաուղղվածությամբ և իրազեկությամբ: Աշխատանքում ընդգրկված է լայնածավալ փաստական նյութ, որը հեղինակին հնարավորություն է տալիս կատարել ծանրակշիռ ընդհանրացումներ:

Բարձր գնահատելով Մ. Փիլիպոսյանի կատարած աշխատանքը՝ կցանկանայինք նշել որոշ դիտարկումներ.

1. Աշխատանքն ավելի կշահեր, եթե ուսուցման գործընթացում կիրառված առաջադրանքների շարքում ներառվեին նաև նախագծային աշխատանքներ:
2. Ցանկալի կլիներ հետփորձարարական հետազոտության արդյունքները համալրել լրացուցիչ որակական վերլուծությամբ, ինչը հնարավորություն կտար առավել ընդգծել ստացված արդյունքների առանձնահատկությունները:
3. Հետազոտությունն առավել ամբողջական կլիներ, եթե մեթոդական համակարգի շրջանակում ավելի մեծ տեղ հատկացվեր հատկապես քաղաքական PR-ի և մանիպուլյատիվ տեքստերի ինքնուրույն վերծանմանն ու քննական վերլուծությանը միտված գործնական առաջադրանքներին:
4. Գովելի է, որ ատենախոսն աշխատանքը կատարելիս ներդրել է թվային մի շարք գործիքներ (Canva, Miro, Wordwall և այլն): Բարձր գնահատելով այս հանգամանքը՝ միաժամանակ կարծում ենք, որ անհրաժեշտություն կա հավելվածում ներառել հակիրճ մեթոդական հրահանգներ, որոնք վերաբերում են այդ գործիքների կիրառմանը քաղաքագիտական անգլերենի լեզվանյութն ուսուցանելիս:
5. Աշխատանքում կան որոշ վրիպակներ, որոնք շտկման կարիք ունեն:

Վերը նշված հարցապնդումները ամենևին չեն նվազեցնում կատարված հետազոտության արժեքը: Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ իրականացված է բավականին լուրջ, տեսական և գործնական նշանակություն ունեցող հետազոտություն: Ատենախոսությունը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջները և հեղինակն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին: Սեղմագիրն իր կառուցվածքով և բովանդակությամբ համապատասխանում է ատենախոսությանը: Հեղինակի տպագիր հոդվածները արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Վերոնշյալը թույլ է տալիս միջնորդել ՀՊՄՀ-ում գործող գիտական աստիճաններ շնորհող 020 մասնագիտական խորհրդի առաջ՝ Մարինե Աղվանի Փիլիպոսյանին մանկավարժական գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանը ԺԳ.00.02 Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ:

Գրախոսությունը քննարկվել և հաստատվել է Ռուս-Հայկական համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի 2026 թվականի հունիսի 5-ին կայացած N11 նիստում:

Ատենախոսության քննարկմանը ներկա էին Ռուս-Հայկական համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի հետևյալ անդամները՝ բ.գ.դ., պրոֆեսոր Կ. Մատինյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ա. Սիմոնյանը, մ.գ.թ., դոցենտ Ռ. Խաչատրյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Սայամյանը, մ.գ.թ., դոցենտ Մ. Եսայանը, դոցենտ Ն. Թովմասյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Թումանյանը և այլք:

Առաջատար կազմակերպություն՝
Ռուս-Հայկական համալսարանի
լեզվի տեսության և միջմշակութային
հաղորդակցության ամբիոնի վարիչ,
բ.գ.դ., պրոֆեսոր՝ Ա. Ա. Սիմոնյան

Հաստատում եմ
Գիտքարտուղար՝ Ռ. Ս. Կասաբաբովա